

ամենքին աղօթել, որ Աստուած կեանք տայ իրան մինչեւ որ կկատարէ իւր վերայ դրած պարտականութիւնները:

«Լուսայ»-ի խմբագրութիւնը ծայնակցում է հայ ժողովրդեան եւ մաղթում, որ Տէրը երկարէ նորին օծութեան ցանկալի կեանքի թելը այնքան, մինչեւ որ արժանի լինի ինքը իւր բերանով ասելու. «Ա՛րդ արձակեա՛ Տէր զճառայս քո...»:

ԹԻՓԼԻՍԻ ՀԱՅ ՔԱՀԱՆԱՆԵՐԻ ԱՊԱՀՈՎՈՒԹԵԱՆ ԳՆՆՁԱՐԱՆ

Գրեթէ ինն տարի առաջ Թիֆլիսում մի համակրելի գործի սկիզբն դրուեցաւ, որի նպատակն էր ապահովել նիւթապէս քահանաներին ու այլ եկեղեցական սպասաւորներին: Համակրելի ենք ասում, որովհետեւ հաւասարապէս ցաւ էր պատճառում թէ հոգևոր դասին և թէ ժողովրդին, որ քահանայք կամաւոր մուրացկանութեան դատապարտուած՝ հացի խնդրի պատճառով յաճախ թերանում էին իրանց իսկական պարտականութիւնները կատարելուց և իրանց ժամանակի մեծ մասը նուիրում էին միանգամայն իրանց կոչման հետ որևէ առընչութիւն չունեցող և կողմնակի պարապմունքներին:

Ընտրուեցաւ վարչութիւն, կանոնագիր մշակուեցաւ, աղբիւրներ հայթայթուեցան և ինն տարուայ ընթացքում գանձարանի դրամագլուխն աճելով՝ 18,000 ռուբլու մի նշանաւոր գումարի հասաւ, կիսով չափ բարեպաշտ անձանց նուէրներից և կիսով չափ գերեզմանատների և այլ արդիւնքներից:

Եւ մինչ մենք, ըստ ամենայնի համակրելով գանձարանի նպատակներին, սպասում էինք որ այդ արկղը

գէթ իոքր չափով կկարողանայ օժանդակել քահանայից նոցա մեծաւ մասամբ թշուառ կացութիւնը բարւոքելու, լսում ենք և բոլոր հայ թերթերն էլ հաղորդեցին որ միտք է յղացուել փակել այդ գանձարանը և միացնել այն «Որբոց և այրեաց հոգաբարձութեան» հետ, որ գոյութիւն ունի կոնսիստօրիային կից:

«Որբոց և այրեաց հոգաբարձութիւնը» մի խեղճ բան է, որ գոյութիւն ունի 1836 թուից և նպատակ ունի օժանդակել ամբողջ թեմի հոգևորականների այրիներին ու որբերին և կառավարուած է հոգևոր իշխանութիւնից նշանակուած երեք քահանաների ձեռքով. մենք գոնէ երբէք չտեսանք այդ հոգաբարձութիւնից որ և է շօշափելի արդիւնք այսքան երկար տարիների ընթացքում և երբէք չի էլ կարելի աւելի բան սպասել նորանից, որովհետև այդ հաստատութեան նպատակը լինելով ամբողջ թեմի խիստ բազմաթիւ հոգևորականների որբերին ու այրիներին խնամելը՝ առանձին հետաքրքրութիւն չունի Թիֆլիսի ժողովրդի և քահանաների համար, ուստի և չէ կարող երբէք վայելել նոցա ուշադրութիւնը, իսկ կոնսիստօրիայի նշանակած երեք քահանաները, որքան էլ բարի ցանկութիւն ունենան, միշտ անզօր պիտի մնան ընդարձակելու իրանց յանձնուած գործը:

Ձենք կարող ապաքէն ծածկել մեր վիշտը այդպիսի անհեռատես մտածող քահանաների վերաբերութեամբ և պարտաւոր ենք յանուն ճշմարտութեան ասել, թէ օրինական հիմունքները սակայն ժխտում են այդպիսի մի կարգադրութեան կարելիութիւնը և ահա թէ ինչու:

«Ապահով. գանձարանի» դրամագլխի գրեթէ կէսը ընծայուած է գանազան բարեպաշտ անձերից յատուկ նպատակներով, որոնք բացատրուած են նորա կանոնադրութեան մէջ, որը հաստատել է Ամենայն Հայոց Տ.

Տ. Մկրտիչ սրբազնագոյն կաթուղիկոսը. ուրեմն և տրամաբանօրէն մտածելով՝ այդ գումարները գործադրել կարելի էր միմիայն կտակողների և նուիրատուների ցանկութեան համեմատ և այս բանը աւելի հաստատութիւն գտաւ գանձարանի նորընտիր վարչութեան առաջին նիստում, ուր նուիրատուներից ոմանք յայտնեցին, թէ՛ եթէ երբ և իցէ փոխուի այս հաստատութեան նպատակը՝ իրանք լետ կստանան իրանց նուիրած գումարները և այլ բարի նպատակի կատկացնեն:

Այստեղից պարզ է, որ երբ գումարը այս եղանակով կցրուի, էլ ոչինչ չի մնայ «որբոց և այրեաց» յանձնելու և նոյն իսկ օրինական չի լինիլ այդ յանձնումը: Ինչ վերաբերում է դրամագլխի մնացեալ մասին՝ պէտք է ասել՝ որ այն ևս իրաւունք չկայ ուրիշ հաստատութեան յատկացնելու, քանի որ քահանայից խնայողութեամբ է կազմուած.— կոմս Լօուս Մելիքեանի թաղման վարձատրութիւնը յատկացրած է այդ գանձարանին, որ քահանայից քրտնաջան վաստակն է, գերեզմանատների արդիւնքն էլ եթէ քահանայից աշխատութիւնը չլինէր՝ յայտնի է, որ շատ աննշան բան պիտի լինէր: Էլ քնչ է մնում «որբոց և այրեաց հոգաբարձութեան» յանձնելու: — Ոչինչ:

Մենք մեր ձայնը միացնում ենք՝ հայ մամուլի ձայնին և հաւատացած ենք, որ թեմիս բարձր սրբազան առաջնորդի միջնորդութեամբ և ազգիս Աստուածարեալ Հայրապետի թոյլտուութեամբ կվերահաստատուի այդ գեղեցիկ ձեռնարկութիւնը և կդրուի առաւել ամուր ու հաստատուն հիմքի վերայ: